



The U.S. Embassy in Armenia



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2019 ԹԹ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՁԵԿՈՒՅՑ

Մոնիտորներ՝ Հարուսթյուն Հարուսթյունյան
Լիլիթ Շաղոյան

2020



The U.S. Embassy in Armenia



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Չեկույցում ներկայացված են Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից իրականացված «Հայաստանի համայնքներում հանրային ծախսերի դիտարկում» ծրագրի շրջանակներում անցկացված 2018-2019 թթ. համայնքային բյուջեների մոնիտորինգի հիմնական արդյունքները:

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

Սույն զեկույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

«Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Երևան 0002, Սարյան 12, 5-րդ հարկ

Հեռ.՝ +374 10 569589, 569689

Էլ. հասցե՝ info@transparency.am

Կայքէջ՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ..... 2

ՆԱԽԱԲԱՆ..... 3

ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՆՔ..... 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 10

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... 11

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ..... 13

 Բյուջեի կազմում և հաստատում..... 13

 Բյուջեի կատարում և վերահսկողություն..... 21

 Բյուջեի գնահատում և աուդիտ..... 24

 Բյուջետային ցուցանիշների վերլուծություն..... 25

 ՇՄՊ ոլորտի ցուցանիշներ..... 34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳՊ	Գնումների պլան
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ԾԲ	Ծրագրային բյուջե
ՀԱԽ	Համայնքային աշխատանքային խումբ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ՄՀ	Մասնավոր հատված
ՇՄՊ	Շրջակա միջավայրի պաշտպանություն
ՌԶԳ	Ռազմավարական զարգացման գործակալություն
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՔՀ	Քաղաքացիական հասարակություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՆԱԽԱԲԱՆ

«Հայաստանի համայնքներում հանրային ծախսերի դիտարկում» ծրագիրն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի գործընկերն է «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունը:

«Հայաստանի համայնքներում հանրային ծախսերի դիտարկում» ծրագրի նպատակն է բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը տեղական բյուջեի ծախսերի մասով, ինչպես նաև խրախուսել համայնքային քաղաքականության և բյուջեի մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը:

Ծրագրի շրջանակում Հայաստանի թվով 7 մարզի 7 համայնքներում իրականացվել է համայնքային բյուջեների մոնիտորինգ: Այդ նպատակով ընտրված համայնքներից ընտրվել են թվով 14 ակտիվ երիտասարդներ, ում համար կազմակերպվել է կարողությունների զարգացման երկօրյա դասընթաց տեղական համայնքային բյուջեների մշակման, հաստատման, կատարման, գնումների գործընթացների, շահերի բախման, ինչպես նաև վերահսկողության և մոնիտորինգի թեմաներով: Մոնիտորինգի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել նաև վերոնշյալ գործընթացներում հանրային մասնակցության, համայնքային դերակատարների (օրինակ՝ համայնքապետարան, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (ՀՈԱԿ), ծառայություն մատուցող ընկերություններ և այլն) թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև բյուջեի կատարման արդյունավետության և ազդեցության խնդիրների վրա:

Ծրագրի ընթացքում ուսումնասիրության առարկա հանդիսացել են 2018-2019թթ. բյուջեները հետևյալ համայնքներում՝

- Սյունիքի մարզ, Սիսիան բազմաբնակավայր համայնք,
- Կոտայքի մարզ, Աբովյան միաբնակավայր համայնք,
- Լոռու մարզ, Ստեփանավան բազմաբնակավայր համայնք,
- Գեղարքունիքի մարզ, Վարդենիս բազմաբնակավայր համայնք,
- Շիրակի մարզ, Ամասիա բազմաբնակավայր համայնք,
- Արագածոտնի մարզ, Ապարան բազմաբնակավայր համայնք,
- Վայոց Ձորի մարզ, Վայք բազմաբնակավայր համայնք:

Համայնքներում ծրագրի դիտորդները ակտիվ կերպով աշխատել են համայնքային կառույցների, ծառայություններ մատուցող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ակտիվ քաղաքացիական խմբերի և փորձագետների հետ:

Մոնիտորինգի արդյունքում մշակված զեկույցները կներկայացվեն համայնքային դերակատարների, ինչպես նաև համապատասխան նախարարությունների և միջազգային ու տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ քննարկմանը:

ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՆՔ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տեղական ինքնակառավարման համակարգի կազմավորման հիմքերն առաջին անգամ դրվեցին 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: Մեկ տարի անց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ հանրապետությունում սկիզբ դրվեց պետության կառավարման ապակենտրոնացման ռազմավարության իրագործմանը և տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանը:

ՀՀ-ում ձևավորվել և գործում է միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգ, որն իրականացվում է միայն համայնքների մակարդակով: Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և վարչատարածքային միավոր:¹ Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի համայնքային նշանակության կարևորագույն խնդիրների լուծմանը՝ ապահովելով համայնքի բնականոն կյանքի ընթացքը:

ՏԻՄ-երի ցանկացած լիազորության իրականացման հիմքը ֆինանսավորումն է, որը սահմանվում է համայնքային բյուջեով: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ-ի) և ՏԻՄ-երի՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Նմանատիպ պահանջ է դրված նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում. «Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է ՀՀԶԾ-ով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա»: Այսպիսով, արդյունքահեն բյուջետավարումը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ներդնելու համար ՀՀ գործող բյուջետային օրենսդրությունը պարունակում է բավարար իրավական հիմքեր, ընդ որում այն ուղղակիորեն կախվածության մեջ է դրվում ՀՀԶԾ-ից:

Բյուջեն ցանկացած համայնքի ֆինանսական ամենահիմնական փաստաթուղթն է, որտեղ ներկայացվում են համայնքի քաղաքականությունը, տարեկան գործունեության պլանավորումը և հսկողությունը: Այն ներառում է տվյալ տարվա համար պլանավորվող ծրագրերը, միջոցառումները, եկամուտների կանխատեսումները և այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերն ու միջոցառումները իրականացնելու համար:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների նպատակային օգտագործումից:

Բյուջեի եկամուտներն ու ծախսերը ճշգրիտ հաշվարկելու նպատակով հատկապես կարևորվում է բյուջեի ծախսերի պլանավորման և կատարման այնպիսի մեթոդի կամ ձևաչափի ընտրությունը, որը հնարավորություն կտա մեծացնել ծախսերի կատարման և ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման վերահսկման արդյունավետությունը, գնահատել սահմանված նպատակներին համապատասխան արդյունքների ստացումը, ինչպես նաև ապահովել ՏԻՄ-երի կողմից կատարվող ծախսերի թափանցիկությունը: Բյուջետավորման այդպիսի մեթոդ կամ ձևաչափ է ծրագրային բյուջեն (ԾԲ): ԾԲ-ն ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն տվյալ տարում բյուջետային ծրագրերն իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում: ԾԲ-ն կառավարման մասնակցային մոտեցում է, որը կենտրոնանում է ՏԻՄ-երի գործունեության արդյունքների և

¹ ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), հոդված 180


շահառուների վրա դրանց ունեցած ազդեցությունների վրա: Այն ուղղված է բարելավելու կառավարման արդյունավետությունը, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

ԾԲ-ի մշակման և կառավարման ծրագրային հիմքերն են ՀՀԶԾ-ը և Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱԴ): ՀՀԶԾ-ում սահմանվում են համայնքի տեսլականը, ռազմավարությունը և հիմնական նպատակները՝ ըստ ՏԻՄ-երի գործունեության ոլորտների, իսկ ՏԱԴ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի աջակցությամբ 2015թ.-ին «Համայնքների ֆինանսիստների միավորում» (ՀՖՄ) հասարակական կազմակերպության կողմից մշակվել է «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում արդյունքահեն բյուջետավարման մեթոդաբանությունը»² և 2015-2019թթ. ընթացքում փուլային տարբերակով ներդրվել ՀՀ 20 միաբնակավայր և 35 բազմաբնակավայր համայնքներում: ԾԲ-ի ներդրման իրավական հիմքը ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 38³ արձանագրային որոշումն է, որով հաստատվել է ՀՀ-ում ԾԲ ներդրման ամբողջական ռազմավարությունը:⁴

Համայնքի ԾԲ-ի գործընթացի իրականացումը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի (գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Համայնքի ԾԲ-ի գործընթացի փուլերը



ԾԲ-ի գործընթացի նշալ փուլերից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է իրար հաջորդող գործողությունների որոշակի հերթականություն: Այդ գործողությունների մի մասն ունի օրենքով հաստատված կատարման ժամանակացույց և պարտադիր է բոլոր համայնքների համար:

² 2017թ.-ին ՀՖՄ-ի կողմից այն լրամշակվել և անվանվել է «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ծրագրային բյուջետավարման մեթոդաբանություն»

³ <https://www.e-gov.am/protocols/item/537/>

⁴ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2015/08/38-12_1ardz_voroshum.pdf

Բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, կատարման և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին (ԽՄ):⁵ ԽՄ-ի վրա դրվում է ՀՀԶԾ-ի, ՏԱԴ-ի և ԾԲ-ի մշակման, քննարկման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներին հանրային մասնակցությունը կազմակերպելու և համակարգելու աշխատանքների կատարման պատասխանատվությունը՝ ՏԻՄ-երի գործունեության բոլոր բնագավառներում:

ԽՄ-ի ձևավորումը և գործունեությունը կանոնակարգվում է համայնքի ավագանու որոշմամբ ընդունված համապատասխան կարգով:

Համայնքի բնակիչների ավելի լայն շերտեր ներգրավելու նպատակով կարող են ձևավորվել նաև Համայնքային աշխատանքային խմբեր (ՀԱԽ)՝ ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բնագավառների (ուղղությունների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ առանձին թաղամասերի:

Բյուջեի նախագծի կազմում և հաստատում

Համայնքի ԾԲ-ի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) մշակում և մարզպետարանների միջոցով ՏԻՄ-երին է տրամադրում վերջիններիս համար պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումներ և ուղեցույցներ, որոնք կանոնակարգում են համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը և կոնկրետացնում համայնքի բյուջեի կազմման հիմքում դրվող ելակետային տվյալները, նորմերը և նորմատիվները, բյուջետային միասնական ձևերը և այլ դրույթներ:

Համայնքի ղեկավարը համայնքի ԾԲ-ի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպում է՝ իր որոշմամբ կամ կարգադրությամբ հաստատված բյուջետային օրացույցին համապատասխան: Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի համակարգմամբ՝ համայնքի բյուջեի նախագիծը մշակվում և ներկայացվում է համայնքի ղեկավարին, որից հետո կազմակերպվում են քննարկումներ համայնքի աշխատակազմի բոլոր բաժինների, բոլոր համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև համայնքի ավագանու անդամների, ՀՀԶԾ-ի և բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի անդամների ներգրավմամբ (նրանց համաձայնությամբ): Քննարկումների արդյունքում ֆինանսական բաժնի պետը մշակում և համայնքի ղեկավարին է ներկայացնում բյուջեի նախագիծը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը դնում է հանրային բաց լսումների կամ քննարկումների՝ այդ մասին լայնորեն իրազեկելով համայնքի բնակչությանը, ԶՀ և ՄՀ կազմակերպություններին և

⁵ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11

խմբերին (հայտարարություններ ցուցատախտակներում, տեղական ՉԼՍ-ներում, համայնքի պաշտոնական համացանցային կայքում և ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով): Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է:

Հանրային քննարկումներից հետո, համայնքի բյուջեի նախագիծը լրամշակվում և ներկայացվում է համայնքի ավագանու քննարկմանն ու հաստատմանը: Բյուջեի նախագիծը համայնքի ավագանու անդամներին է ներկայացվում համայնքի ավագանու նիստը սկսվելուց առնվազն 7 օր առաջ: Միևնույն ժամանակ, համայնքի ղեկավարը նիստից առնվազն 7 օր առաջ հրապարակում է ավագանու նիստի վերաբերյալ տեղեկատվությունը համայնքի իրազեկման և ավագանու նիստերին բնակչության մասնակցության ապահովման համար: 10000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերն առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Բյուջեի կատարում և վերահսկողություն

Համայնքի բյուջեի կատարումը ՏԻՄ-երի՝ համայնքի բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: ԾԲ-ի դեպքում, բյուջեի կատարումը չի ուղղվում միայն ծախսային հոդվածների լոկ թվային կատարմանը (ինչպես ծախսային բյուջեի դեպքում է), այլ նպատակաուղղվում է բյուջեով նախատեսված արդյունքների ձեռքբերմանը:

ԾԲ-ի կատարման և վերահսկման փուլի տևողությունը համընկնում է ամբողջ բյուջետային գործընթացի տևողության հետ: Եթե ԾԲ-ի կատարման տևողությունը կազմում է 12 ամիս, որի սկսվելու և ավարտվելու ժամկետներն ամբողջապես համընկնում են տվյալ բյուջետային տարվա հետ (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը), ապա ԾԲ-ի վերահսկումը կատարվում է ԾԲ-ի ինչպես կատարման, այնպես էլ պլանավորման, աուդիտի ու գնահատման փուլերում:

Համայնքի ԾԲ-ի կատարման ամբողջ ընթացքում, ինչպես և ԾԲ-ի մշակման ժամանակ, նախատեսվում է համայնքի բնակիչների (մասնավորապես՝ շահառուների) ակտիվ մասնակցությունը, ինչը բյուջեի կատարման գործընթացը դարձնում է առավել թափանցիկ և վերահսկելի:

Համաձայն ՀՀ բյուջետային օրենսդրության՝ համայնքի բյուջեի կատարման հիմնական պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Համայնքի ԾԲ-ի հաստատման մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի ԾԲ-ի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հաստատում է համայնքի բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, ՀՀ կառավարությունը և ՀՀ հաշվեքննիչ պալատը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների), մշտական հանձնաժողովների և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

ՀՀ բյուջետային օրենսդրությունը սահմանում է համայնքի ղեկավարի կողմից եռամսյակը մեկ անգամ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման

ընթացքի մասին հաղորդումների (տեղեկատվության) ներկայացում համայնքի ավագանու: ԾԲ-ի կատարման եռամսյակային հաշվետվությունները կազմվում են ըստ պլանային, ճշտված և փաստացի կատարված մուտքերի և ելքերի, և ըստ բյուջետային ծրագրերի և միջոցառումների իրականացման աստիճանի:

Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազոր մարմնի միջոցով:

Համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, համայնքի սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննություն է իրականացնում Հաշվեքննիչ պալատը՝ օրենքով սահմանված կարգով: Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին ավագանու որոշմամբ սահմանված չափաբանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Բյուջեի գնահատում և աուդիտ

Բյուջետային գործընթացի երրորդ փուլը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում, սկսվում է բյուջետային տարվա ավարտին հաջորդող օրվանից: Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ ավագանին, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ, քննարկում և հաստատում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը:⁶

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների

⁶ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մասեր 3, 5

ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված: Եթե համայնքի ավագանին, այնուամենայնիվ, իր որոշմամբ ընդունում է համայնքի ղեկավարի հրաժարականը, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է համապատասխան մարզպետին: Համայնքի ԾԲ-ի ներքին մոնիտորինգն իրականացվում է ՀՀԶԾ-ի և ԾԲ-ի կառավարման գծով ԽՄ-ի և ոլորտային ՀԱԽ-երի կողմից եռամսյակը մեկ անգամ՝ բյուջեում ներառված ոլորտային ծրագրերի յուրաքանչյուր միջոցառմամբ սահմանված ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների գնահատման միջոցով: ՀԱԽ-երի կողմից կատարված՝ ԾԲ-ի ներքին մոնիտորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ներկայացվում են ԽՄ-ին, որը դրանք ամփոփ փաստաթղթի տեսքով ներկայացնում է համայնքի ղեկավարին: Վերջինս էլ այն ներկայացնում է համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքի ԾԲ-ի արտաքին մոնիտորինգն իրականացվում է ԾԲ-ի ծրագրերի շահառուների, ԶՀ և ՄՀ կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ կողմերի կողմից, բյուջետային տարվա ընթացքում կամ դրա ավարտից հետո՝ ըստ անհրաժեշտության և նպատակահարմարության: Համայնքի ԾԲ-ի արտաքին մոնիտորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ներկայացվում են համայնքի ղեկավարին, վերջինս էլ այն ներկայացնում է համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքի ԾԲ-ի գործընթացի եզրափակիչ փուլը ԾԲ-ի աուդիտը և գնահատումն է: Եթե ավանդական բյուջետավարման դեպքում բյուջեի աուդիտը հիմնականում հանգում է տարեկան ֆինանսական աուդիտին (պարզվում է ֆինանսական գործառնությունների համապատասխանությունն ընդունված կանոններին), ապա ԾԲ-ի դեպքում առաջնային նշանակություն է տրվում բյուջետային ծրագրերի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքներին: Այդպիսով, համայնքի ԾԲ-ի աուդիտը հաշվետվողականություն ապահովելու կարևոր միջոց է, որն արձանագրում է ինչպես ֆինանսական գործառնությունների ճշտությունը (ֆինանսական հաշվետվողականություն), այնպես էլ՝ համայնքային ծառայությունների մատուցման և ծրագրերի իրականացման որակը և արդյունավետությունը (ծրագրային հաշվետվողականություն):

Համայնքի ԾԲ-ի աուդիտը լինում է ներքին և արտաքին: Համայնքի ԾԲ-ի ներքին աուդիտը ներքին վերահսկողության տրամաբանական շարունակությունն է: Համայնքի ներքին աուդիտորները՝ լինելով համայնքի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի ղեկավարի ներկայացրած ԾԲ-ի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ իրենց ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները ներկայացնում են համայնքի ավագանուն:

Համայնքի ԾԲ-ի արտաքին աուդիտորները մասնագիտացված կազմակերպություններ են և գործում են պայմանագրային հիմունքներով: Համայնքի ավագանին, բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով, ԾԲ-ի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ կարող է ներգրավել անկախ աուդիտորական ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2016 թվականին «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Ջրածոր համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Ամասիա բազմաբնակավայր համայնքը, որի կենտրոնը Ամասիա բնակավայրն է: Նորաստեղծ համայնքը վարչական սահմաններով սահմանակից է Թուրքիայի Հանրապետությանը և ՀՀ Աշոցք, Արփի, Սարապատ, Հայկավան, Մարմաշեն համայնքներին:

Համայնքը գտնվում է ՀՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ ծովի մակերևույթից 1600-2500 մետր բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը՝ տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը՝ 600-700 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 5729 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 2760 և կանայք՝ 2969:

Ամասիայի բնակիչների՝ հատկապես համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերում, հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Լայն տարածված են անասնապահության ու դաշտավարության ճյուղերը: Դաշտավարությամբ զբաղվողների մոտ, ովքեր հիմնականում կենտրոնացած են համայնքի հարավային հատվածի բնակավայրերում, հատկապես կարելի է առանձնացնել ոռոգման ցանցի հետ կապված խնդիրները, որոնք մեծ խոչընդոտներ են առաջացնում այս ճյուղի զարգացման գործում:

Վերջին տարիներին համայնքի ողջ տարածքում ակտիվ գործունեություն են ծավալում մի շարք միջազգային ՀԿ-ներ, համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման նպատակով ներգրավվել են ՀՀ-ում գործունեություն ծավալող տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումային և դրամաշնորհային ծրագրեր, ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր:

Համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի առաջնային գերխնդիրն է Ամասիան դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած համայնք, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի համայնքներում հանրային ծախսերի դիտարկում» ծրագիրը մեկնարկել է 2019թ. հոկտեմբերի 1-ից, իսկ մոնիտորինգի աշխատանքներն իրականացվել են 2019 թ. դեկտեմբերի 23-ից 2020 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:

Ծրագրի շրջանակում ուսումնասիրության առարկա են դարձել 2018-2019թթ. բյուջեները ՀՀ 7 համայնքներում:

Համայնքներում ծրագրի մոնիտորները աշխատել են համայնքային կառույցների, ծառայություններ մատուցող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ակտիվ քաղաքացիական խմբերի և փորձագետների հետ: Տեղեկատվության հավաքագրումը իրականացվել է հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

Համայնքի բյուջեի մոնիտորինգի նպատակով տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ համայնքի բյուջետավարման գործընթացի փուլերի՝

- պլանավորում,
- կատարում և վերահսկողություն,
- աուդիտ և գնահատում:

Մոնիտորինգի նպատակով ուսումնասիրության առարկա հանդիսացել են համայնքի բյուջեով նախատեսված բաժիններից *շրջակա միջավայրի պաշտպանության* ոլորտի ծրագրերը:

Մոնիտորների աշխատանքները հիմնվել են հետևյալ քայլերի վրա՝

- համայնքի բյուջեի մոնիտորինգի իրականացման մասին տեղեկացում համայնքի ղեկավարին, համայնքում գործող (ԶՀ, ՄՀ) կառույցներին: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) կողմից ուղարկվել են պաշտոնական գրություններ համապատասխան համայնքապետարաններ, որոնց պատճենները տրամադրվել են մոնիտորներին,
- պայմանավորվածությունների ձեռքբերում համայնքի ղեկավարի, ավագանու անդամների և պատասխանատու այլ պաշտոնյաների, ինչպես նաև ԶՀ, ՄՀ կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման և համայնքապետարաններից անհրաժեշտ փաստաթղթերի ստացման/ուսումնասիրության վերաբերյալ,
- համայնքի բյուջետային գործընթացի վերաբերյալ ՏԻՄ-երի իրավական ակտերի, բյուջետային փաստաթղթերի ձեռքբերում և ուսումնասիրություն,
- համայնքի բյուջետային գործընթացի մոնիտորինգի իրականացում և արդյունքների ստացում՝ ըստ առանձին փուլերի (բյուջեի կազմում և հաստատում, բյուջեի կատարում և վերահսկողություն, բյուջեի գնահատում և աուդիտ),
- տվյալների հավաքագրում ըստ ներկայացված հարցաշարի և ժամկետների,
- մշտական հաղորդակցության ապահովում ծրագրային թիմի հետ,
- համայնքի բյուջեի մոնիտորինգի վերաբերյալ զեկույցի մշակում՝ ներառելով համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Մոնիտորինգի գործընթացը բաժանված էր *երկու մասի՝*

- բյուջետային գործընթացի դիտարկում՝ բյուջեի մշակման, քննարկման, հաստատման, կատարման, վերահսկողության և գնահատման գործընթացների թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների գնահատման նպատակով,
- դիտարկման համար ընտրված ոլորտի մասով համայնքային բյուջեի վերլուծություն՝ ծրագրերի ու ծախսերի պլանավորման և փաստացի կատարման, ծրագրային ցուցանիշների իրատեսության և այլ տեսանկյունից խնդիրների վերհանման և գնահատման նպատակով:

Մոնիտորինգի գործընթացը համակարգվել ու վերահսկվել է ԹԻՅԿ ծրագրային թիմի կողմից:

Ուսումնասիրության գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է 2 հիմնական տարբերակներով՝

- մոնիտորների կողմից երկշաբաթյա հաշվետվությունների ներկայացում կատարված աշխատանքների և ծագած խնդիրների, ինչպես նաև ուսումնասիրության հիմնական բացահայտումների վերաբերյալ ըստ տրամադրված հարցերի/հարցախմբերի:
- ծրագրային թիմի կողմից ընթացիկ խորհրդատվության և աջակցության տրամադրում:

Բյուջեի կազմում և հաստատում

Բյուջեի նախագծի կազմման գործընթաց

Ուսումնասիրելով համայնքի գործող ՀՀԶԾ-ն,⁷ նրանում տեղ գտած վերլուծությունները, նախանշված ծրագրերն ու միջոցառումները, կարող ենք եզրակացնել, որ համայնքի գրեթե բոլոր բնակավայրերին բնորոշ է միևնույն խնդիրների փաթեթը, որը ներառում է հետևյալ միջոցառումները՝

1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում
2. Համայնքի բնակավայրերում գյուղատնտեսական ճյուղի զարգացում
3. Ներբնակավայրային ճանապարհների վերանորոգում, համայնքի լուսավորության ցանցերի պահպանում և ընդլայնում
4. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի վերանորոգում՝ բնակչությանը ապահովելով շուրջօրյա ջրամատակարարմամբ
5. Համայնքի բնակավայրերի գազաֆիկացում
6. Համայնքապետարանի և բնակավայրերի վարչական շենքերի կառուցում կամ վերանորոգում
7. Ոռոգման ցանցերի վերանորոգում
8. Գերեզմանատների պարսպապատում
9. Համայնքի բոլոր բնակավայրերում կանոնավոր աղբահանության կազմակերպում
10. Համայնքի բնակիչներին նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցում

Քննարկվող 2018 և 2019 թթ. բյուջետային նախագծերում տեղ գտած միջոցառումները հիմնականում բխում են ՀՀԶԾ-ից և համապատասխան տարեկան աշխատանքային պլանների ռազմավարությունից և միտված են համայնքի բնականոն զարգացումը ապահովելուն ու բնակավայրերի առջև ծառայած խնդիրների լուծմանը: Ստորև ներկայացնում ենք մի շարք արդյունքային ցուցանիշներ, որոնք տեղ են գտել 2018 թվականի ծրագրային բյուջեում ու բխում են համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ից և 2018,⁸ 2019թթ.⁹ ՏԱԴ-երից:

2018 թ. ծրագրային բյուջեից և ՏԱԴ-ից առանձնացվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝¹⁰

1. համայնքի բնակավայրերի գյուղատնտեսության զարգացումը ապահովելու նպատակով իրականացվել են մի շարք գործողություններ, որոնց արդյունքում նախանշվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝
 - ապահովել գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը,
 - բարձրացնել բերքատվությունը,

⁷ Ամսախա համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր, <http://shirak.mtad.am/files/docs/25098.pdf>

⁸ Ամսախա համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլան, <http://shirak.mtad.am/files/docs/33275.pdf>

⁹ Ամսախա համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլան, http://amasia.am/upload/DocFlow/UpLoader/We202261107551137_AWP2019.pdf

¹⁰ Ամսախա համայնքի 2018 թվականի ծրագրային բյուջե, էջ 7-13, http://amasia.am/upload/DocFlow/CouncilorDrafts/Fr182091426335137_voroshum7compressed.pdf

- Նոր ծրագրեր ներգրավելու միջոցով ստեղծել նոր աշխատատեղեր:
2. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցման արդյունքում՝
 - բարձրացնել համայնքապետարանի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը,
 - ավելացնել սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում:
 3. Բնակավայրերում կանոնավոր աղբահանության ծավալների ընդլայնման արդյունքում՝
 - ավելացնել աղբահանություն իրականացվող բնակավայրերի թիվը,
 - ավելացնել համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ:
 4. Կրթություն՝
 - համայնքի Ամասիա և Ողջի բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում,
 - Ամասիա բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում:
 5. Համայնքի բնակավայրերում գիշերային լուսավորության ապահովման և լուսավորության ցանցի ընդլայնման արդյունքում՝
 - մեծացնել գիշերային լուսավորությամբ ապահովված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

2019 թ. համայնքում ծրագրային բյուջետավորում չի իրականացվել, իսկ համայնքի ՏԱՊ-ում տեղ են գտել հետևյալ ցուցանիշները և ծրագրերը՝¹¹

1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցման արդյունքում՝
 - ավելացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում,
 - ավելացնել ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին,
 - ավելացնել համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված բոլոր որոշումներում:
2. Համայնքի բնակավայրերում գիշերային լուսավորության ապահովման և լուսավորության ցանցի ընդլայնման արդյունքում՝
 - համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ հասցնել 10%-ի:

¹¹ Ամասիա համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլան, էջ 10-28, http://amasia.am/upload/DocFlow/UpLoader/We202261107551137_AWP2019.pdf

3. Համայնքի բնակավայրերում գյուղատնտեսության ճյուղերի զարգացման ապահովում՝

- հակակարկտային կայանների տեղադրման և պահպանման աշխատանքների իրականացում,
- գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման և պահպանման աշխատանքների իրականացում,
- ոռոգման ցանցի վերանորոգում,
- ագրոֆիմիական քարտեզների կազմում,
- անասնաբուժական կետերի վերանորոգում

4. Բնակավայրերում կանոնավոր աղբահանության ծավալների ընդլայնման արդյունքում՝

- Համայնքի Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան և Հովտուն բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում:

5. Կրթություն՝

- համայնքի Ամասիա և Ողջի բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում,
- Ամասիա բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում:

2018 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Ամասիա բազմաբնակավայր համայնքում ներդրվել են ԾԲ մոտեցումները: Համայնքի ղեկավարի 2018 թ. բյուջետային ուղերձում ներկայացված են բյուջետավորման այս ձևաչափի ընտրության պատճառները և առավելությունները, որտեղ հիմնական շեշտը դրվում է բյուջետային ծրագրի միջոցառումների կատարման թափանցիկությունն ապահովելուն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու վրա: ¹² 2019 թվականին համայնքապետարանում առաջնորդվել են ծրագրային բյուջետավորման սկզբունքներով, կազմվել է ՏԱՊ, սակայն ԾԲ-ի վերջնական փաստաթուղթը չի պատրաստվել:

Ըստ համայնքապետարանի աշխատակիցների, ԾԲ-ի կազմման գործընթացը բավականին աշխատատար է, և հարկավոր է իրականացնել մի շարք գործողություններ՝ մոնիտորինգներ, հարցումներ և այլն, որոնց իրականացման համար կա լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների ներգրավման կարիք:

Վերը նշված մոնիտորինգներն ու հարցումները առավել շատ անհրաժեշտ են ԾԲ-ում տեղ գտած արդյունքային ցուցանիշները հստակ ձևակերպելու և իրականացված աշխատանքների ծավալները և որակը չափելու համար: Ստորև ներկայացնում ենք Ամասիա բազմաբնակավայր համայնքի 2018 թ. ԾԲ-ով նախատեսված արդյունքային ցուցանիշները՝¹³

¹² Ամասիա համայնքի 2018 թվականի ծրագրային բյուջե, էջ 3, http://amasia.am/upload/DocFlow/CouncilorDrafts/Fr182091426335137_voroshum7compressed.pdf

¹³ Ամասիա համայնքի 2018 թվականի ծրագրային բյուջե, էջ 13-15, http://amasia.am/upload/DocFlow/CouncilorDrafts/Fr182091426335137_voroshum7compressed.pdf

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտ.

- ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչների համար հասցնել 80 %-ի,
- համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում հասցնել 36.6 %-ի,
- ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը հասցնել 60 %-ի,
- ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին հասցնել 80 %-ի:

2. Տնտեսական հարաբերություններ՝ գյուղատնտեսություն.

- գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ ավելացնել 2 %-ով,
- համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ հասցնել 10%-ի,
- բերքատվության բարձրացում 12%-ով,
- հողերի օգտագործման ճիշտ պարարտացման արդյունքում բերքատվության աճ 2 %-ով,
- նոր ծրագրերի ներգրավման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում 5 աշխատատեղ,
- նոր ծրագրերի ներդրման միջոցով համախառն ներքին արդյունքի աճ 2 %-ով,
- գյուղատնտեսական բնագավառի ներդրումների ծավալը՝ 6.000.000 դրամ:

3. Շրջակա միջավայրի պաշտպանություն.

- աղբահանություն իրականացվող բնակավայրերի թվի ավելացում 2 բնակավայրով,
- համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության ծառայություններից հասցնել 70 %-ի,
- համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ հասցնել 50%-ի:

4. Բնակարանային տնտեսություն և կոմունալ ծառայություն.

- շքամուտքերի լուսամուտների տեղադրում՝ 600 քմ,
- նորոգված մուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ հասցնել 20 %-ի,
- համայնքի բնակիչների կարծիքը ջրամատակարարման ծառայությունների վերաբերյալ դարձնել «լավ»,
- գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ հասցնել 60 %-ի,

- համայնքում Էներգախնայող լամպերով լուսավորված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորված տարածքների ընդհանուր մակերեսի մեջ հասցնել 100 %-ի,
- Նոր տեղադրված հեռախոսների քանակը՝ 12:

5. Հանգիստ, մշակույթ և կրոն.

- մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների ընդհանուր թվի կազմում հասցնել 45 %-ի,
- մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին՝ «մասամբ»,
- գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը ավելացնել 1 %-ով,
- զբոսայգու բարեկարգում և շատրվանների վերանորոգում՝ «բարեկարգված» և «վերանորոգված»,
- համայնքի բնակիչների գոհունակությունը կատարված վերոնշյալ աշխատանքներից՝ «այո»:

6. Կրթություն.

- բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից հասցնել 80 %-ի,
- մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին հասցնել 45 %-ի,
- արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ հասցնել 65 %-ի,
- ծնողների կարծիքը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության վերաբերյալ՝ «բավարար»:

7. Սոցիալական պաշտպանություն.

- սոցիալական ծրագրերի շահառուների բավարարվածությունը իրականացված ծրագրերից՝ «մասամբ»:

2019 թ. համայնքապետարանն առաջնորդվել է ծրագրային բյուջետավորման սկզբունքներով, կազմվել է համայնքի ՏԱՊ, սակայն ծրագրային բյուջեի վերջնական փաստաթուղթը չի պատրաստվել:

Դիտարկելով ցուցանիշները և ուշադրություն դարձնելով դրանց համար սահմանված արդյունքներին՝ նկատում ենք, որ դրանց մի մասը սահմանված են բավականին հստակ, վերցված են ոչ շատ բարձր, իրականանալի ցուցանիշներ: Այս խմբի մեջ հիմնականում քանակական և որակական ցուցանիշներ են: Մյուս խմբում, որտեղ գրեթե ամբողջությամբ տոկոսային ցուցանիշներ են, ցուցանիշները առավել ընդգրկուն են և պահանջում են հատուկ մասնագիտական վերլուծություններ և հետազոտություններ ոչ միայն սահմանման, այլև արդյունքների գնահատման առումով: Այս մասով իրենց մտահոգությունն են հայտնել նաև համայնքապետարանի աշխատակիցները, ովքեր նշել են, որ ցուցանիշների իրատեսականությունը գնահատելու համար կա լրացուցիչ աշխատանքների՝ հարցումների, մոնիտորինգի, հետազոտությունների կարիք:

Կարևոր է նշել, որ բյուջեի կազմման գործընթացում ունենք թափանցիկության և կազմակերպման մի շարք բացեր՝ բացակայում են համայնքի ղեկավարի հանձնարարականները, որով սահմանվում է բյուջետային գործընթացի սկիզբը և ներկայացվում է բյուջետային օրացույցը: Չկա փաստաթուղթ, որը կներկայացնի համապատասխան հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կազմը:

Բյուջեի նախագծի քննարկման և հաստատման գործընթաց

Համայնքապետարանի աշխատակիցները նշում են, որ բյուջեի նախագծի ներկայացման և քննարկման համար կազմակերպվել են հանրային լուսմներ համայնքի բոլոր բնակավայրերում: Համայնքի պաշտոնական համացանցային www.amasia.am կայքում և համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են հայտարարություններ համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային լուսմներ իրականացնելու առնչությամբ, սակայն չի հաջողվել ստանալ համապատասխան կարգով սահմանված, հանրային լուսմների հետ կապված պատշաճ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, որոնք պետք է ներկայացվեին նաև համայնքի ավագանուն բյուջեի նախագծի հետ միասին:

Համայնքի բնակիչները հիմնականում տեղեկացված չեն կամ տիրապետում են միայն շատ մակերեսային տեղեկությունների՝ կապված 2018 և 2019 թթ. բյուջեներով նախատեսված ծախսերի վերաբերյալ: Այս մասով շատ կարևոր է շեշտել, որ բնակիչների մոտ հիմնականում հստակ ձևակերպված խնդիրներ են, որոնք պահանջում են ֆինանսական մեծ ներդրումներ: Համայնքապետարանում նշում են, որ ունեն խնդիրների մեծ ցանկ, որը հնարավոր չէ լուծել միայն համայնքի բյուջեի միջոցներով, մի մասի դեպքում էլ փորձում են տարեցտարի կատարվող փոքր ներդրումների կամ այլ աղբյուրների ներգրավմամբ հասնել դրական արդյունքների: Այս մասով, կարծես թե, երկու կողմերում էլ ունենք կարծիքների համընկում, համաձայն որի համայնքում տարիներ շարունակ կուտակված շատ խնդիրներ կան, և դրանց լուծման ուղղությամբ մեծ ջանքերի և ռեսուրսների ներդրման կարիք է զգացվում:

Կարևոր է նաև նշել, որ բնակիչների կարիքների մեջ զգալի մաս են կազմում համայնքապետարանի լիազորություններից դուրս գտնվող խնդիրները:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հիմնական բացը, որ առանձնացնում են բնակիչները, կապված է ոլորտի շրջանակներում միայն աղբահանության ծրագրով ծախսեր նախատեսելու հետ: Ըստ բնակիչների՝ համայնքում պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելու համար առավել մեծ ջանքեր ներդնելու կարիք կա: Աղբահանության ծրագրի շրջանակներում կանոնավոր աղբահանություն կազմակերպվում է բնակավայրերի միայն մի մասում, և միայն ամբողջական ծավալով ու ծածկույթով աղբահանություն իրականացնելու դեպքում կարող ենք արձանագրել ոլորտի այս հատվածով բնակիչների կարիքները բավարարելու փաստը:

2018 և 2019 թթ. բյուջեների նախագծերը մինչև հանրային լուսմներն ու ավագանու կողմից նախագծի հաստատումը չեն հրապարակվել: Բնակիչների համար բյուջեի նախագծի հետ ծանոթանալու հիմնական միջոց հանդիսացել են հանրային լուսմները: Ըստ համայնքապետարանի աշխատակիցների՝ քննարկվող տարիների բյուջեների կազմման գործընթացի շրջանակներում համայնքում կազմակերպվել են բյուջեի նախագծի հանրային լուսմներ: Amasia.am կայքում և համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են 2018 թ. բյուջեի նախագծի ներկայացման վերաբերյալ հայտարարություններ, սակայն բացակայում են նյութեր՝ կապված 2019 թ. բյուջեի նախագծի հանրային լուսմների վերաբերյալ: Բնակիչների համար այս լուսմները, որպես այդպիսին, հանդիսացել են միակ

տեղեկատվական հանդիպումները՝ կապված բյուջեի նախագծի քննարկման հետ, մինչև դրա քննարկումը և հաստատումը ավագանու կողմից:

Համայնքի բյուջեի լուումներն ու քննարկումները եղել են բավականին պասիվ, բնակիչների մասնակցության ցուցանիշները՝ ցածր: Կազմակերպված լուումներին ավելի շատ մասնակցել են համայնքի ավագանու անդամներ, համայնքային կառույցների ներկայացուցիչներ, սակայն սակավաթիվ բնակիչներ: Կարելի է առանձնացնել 2018թ. բյուջեի հանրային լուումները, որոնց մասնակցել են ոչ միայն վերը նշված խմբերը, այլ նաև ներկայացուցիչներ համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից, հյուրեր պետական և այլ կառույցներից: Ըստ երևույթին, նման ակտիվությունը բացատրվում է համայնքների միավորման գործընթացի արդյունքում այդ համայնքներ հանդեպ աճող հետաքրքրությամբ: Համաձայն համայնքապետարանի աշխատակիցների՝ լուումների և քննարկումների շրջանակներում առաջարկություններ և դիտարկումներ առանձնապես չեն արձանագրվել:

Համայնքում զգացվում է լրացուցիչ տեղեկատվական միջոցների ներգրավման կարիք, քանի որ միայն համայնքի կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրված հայտարարությունները չեն ապահովում բնակչության լայն շերտերի ներգրավվածությունը նմանատիպ քննարկումներին:

Քննարկվող տարիների բյուջեների հաստատման գործընթացի մասին հիմնականում տեղեկանալ հնարավոր է համայնքի կայքի միջոցով, որտեղ ներկայացված է ավագանու նիստերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

2018 թ. բյուջեի հաստատման գործընթացը, համաձայն կայքում առկա տեղեկատվության, իրականացվել է ավագանու 25.12.2017թ. թիվ 11 հերթական նիստում, որին մասնակցել են համայնքի ավագանու անդամները, ղեկավարը և համայնքապետարանի աշխատակիցներ: Չնայած այն հանգամանքին, որ ավագանու բոլոր նիստերը իրականացվում են դռնբաց և հանրությանը հասանելի ձևաչափով, մինչ նիստի կազմակերպումը բացակայում է տեղեկատվությունը դրա կայացման և օրակարգում ընդգրկված նախագծերի վերաբերյալ:

2019 թ. բյուջեի քննարկման և հաստատման գործընթացը, համաձայն համայնքի կայքէջում առկա տեղեկատվության, իրականացվել է ավագանու 13.12.2018թ. թիվ 11 արտահերթ նիստում, որին դարձյալ մասնակցել են միայն ավագանու անդամները, համայնքի ղեկավարը և համայնքապետարանի աշխատակիցներ: Ի տարբերություն 2018 թվականի բյուջեի նախագծի հաստատման նիստի՝ 2019 թ. բյուջեի նախագծի հաստատման նիստի դեպքում, չնայած դրա արտահերթ լինելու փաստին, կայքում տեղադրված է նիստի կայացման վերաբերյալ տեղեկատվություն¹⁴, սակայն բացակայում է դրա օրակարգում ընդգրկված նախագծերի ցանկը:

Քննարկվող 2 տարիների մասով էլ կարող ենք եզրակացնել, որ մինչև բյուջեի հաստատման գործընթացը, բնակիչներին չի տրամադրվել բավարար տեղեկատվություն ավագանու նիստի կայացման և դրանում ընդգրկված նախագծերի վերաբերյալ:

¹⁴ <http://amasia.am/Pages/Home/Events.aspx?eID=563&fbclid=IwAR3vP1uiXrr7-4NBhVBhek99oX4knZubqwbisQsH4OXjhUBT-TNS4jizytzQ>

Համայնքային գնումների պլանավորման գործընթաց

2018 թվականի գնումների պլանը (ԳՊ) համայնքապետի կողմից հաստատվել է 2017 թ. դեկտեմբերի 26-ին և սահմանված կարգի համաձայն տեղադրվել gnumner.am կայքի համապատասխան բաժնում 2017 թ. դեկտեմբերի 27-ին:¹⁵ 2019 թվականի ԳՊ-ը¹⁶ համայնքապետի կողմից հաստատվել է 2019 թ. դեկտեմբերի 14-ին (այստեղ անուշադրության արդյունքում 2018-ի փոխարեն գրվել է 2019), և արդեն 2019 թ. հունվարի 17-ին փաստաթուղթը հրապարակվել է Gnumner.am կայքում: Համաձայն համայնքապետարանի աշխատակիցների պարզաբանման՝ համայնքի 2019 թ. ԳՊ-ի հրապարակման ժամկետային խախտումը կապված է Շիրակի մարզպետարանի աշխատանքի հետ, քանի որ համայնքի գնումների փաստաթղթերը համապատասխան տեղեկագրերում տեղադրվում են այդ կառույցի կողմից:

Համայնքի 2 տարիների ԳՊ-ները բովանդակային առումով ամբողջությամբ նույնական են, իսկ կատարվելիք աշխատանքների ծավալներն անմիջականորեն կապված են համապատասխան տարիների բյուջեներով նախատեսված ծախսերի չափերի հետ: Դրանցում ներկայացված են բոլոր այն ոլորտները, որոնց շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ և դրանց կատարման համար նախատեսված ֆինանսական հոսքերը:

¹⁵ Ամասիա համայնքի 2018թ. գնումների պլան,
http://gnumner.am/website/images/original/Tu1712261314531117_12262017130819.rar

¹⁶ Ամասիա համայնքի 2019թ. գնումների պլան,
<http://gnumner.am/website/images/original/75e41417.pdf>

Բյուջեի կատարում և վերահսկողություն

Բյուջեի կատարման և ընթացիկ փոփոխությունների գործընթաց

Բյուջեում կատարվող փոփոխությունները հիմնականում պայմանավորված են սուբվենցիոն ծրագրերի և այլ պետական ու միջազգային ծրագրերի ներգրավմամբ: Փոփոխությունները չէին կարող պլանավորվել բյուջեի նախագծերի հաստատված տարբերակներում, ինչի հետևանքով հնարավոր են որոշակի տեղաբաշխումներ բյուջեի ծախսային հատվածում: Այս մասով բյուջեում կատարված փոփոխությունները հիմնավորվում են համայնքի կողմից փոքր ներդրման ապահովման հանգամանքով, պետության կամ այլ դոնոր կառույցների կողմից համայնքում նոր ֆինանսական հոսքեր և մեծ ներդրումներ ապահովելու փաստով: Փոփոխությունների կատարման մեկ այլ հանգամանք կարող են հանդիսանալ բյուջեի ֆոնդային մասում չպլանավորված մուտքերը կամ պլանավորված ծախսերի հետ կապված նոր հանգամանքների ի հայտ գալը:

Շահագրգիռ կողմերը հաստատված բյուջեում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ հիմնականում տեղեկանում են ավագանու նիստերի ընթացքում կայացվող որոշումների միջոցով, որոնք տեղադրվում են համայնքի կայքում, սակայն պետք է փաստել, որ սրանք ավելի շատ կրում են տեղեկատվական բնույթ, և այս մասով բաց է մնում մինչև փոփոխությունների կատարումը բնակիչների ներգրավվածության ապահովման գործոնը: Քննարկվող տարիներին համայնքի բյուջեի կատարման ընթացքում հանրային լսումներ և քննարկումներ կազմակերպվել են՝ սուբվենցիոն ծրագրերի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի իրականացման հետ կապված:

Այսպես, համաձայն 2018 և 2019 թթ. կիսամյակային հաշվետվություններում տեղ գտած տեղեկատվության՝ ՇՄՊ ոլորտում համայնքապետարանի կողմից պլանավորվել և իրականացվել են գրեթե ամբողջությամբ նույն միջոցառումները՝ կապված աղբահանության աշխատանքների հետ: Բյուջեի կիսամյակային հաշվետվություններում հիմնականում հակիրճ ներկայացված են աղբահանության աշխատանքներ իրականացրած բնակավայրերը և աշխատանքների պարբերականությունը, որը գրեթե ամբողջությամբ նույնական է, ինչը կապված է քննարկվող 2 տարիների դեպքում էլ բյուջեով նախատեսված ծախսերի և իրականացված աշխատանքների նույն ծավալի հետ:

Համայնքային գնումների կատարման գործընթաց

Համայնքապետարանի կողմից ապահովված է գնումների գործընթացի թափանցիկությունը՝ մասնավորապես, համապատասխան էլեկտրոնային տեղեկագրերի միջոցով ներկայացվում են տարեկան բյուջեով նախատեսված գնումների գործընթացի իրականացման վերաբերյալ հայտերի բացման և նիստերի գնահատման արձանագրությունները:

Արձանագրություններում ներկայացված են մրցույթների մասնակից կազմակերպությունների ցանկը և դրանց մասին համառոտ տեղեկատվություն: Առկա է գնման առարկա հանդիսացող ծառայության կամ ապրանքի նախահաշվային գինը, այնուհետև ներկայացված են հայտատուների առաջարկները: Վերջում նշված է գնահատող հանձնաժողովի որոշումը, որտեղ նշվում է հաղթող ճանաչված հայտատուի անվանումը և ընտրության հիմնավորումները:

Գնումների վերանայված պլանները սահմանված կարգին համապատասխան տեղադրված են ՀՀ ՖՆ գնումների համակարգի կայքի (gnumner.am) համապատասխան բաժնում:

Համայնքի 2018 և 2019 թթ. գնումների գործընթացի մանրամասն հետազոտության արդյունքում առանձնացվել են գնման մի քանի գործարքներ, որոնք կարող են պարունակել ռիսկեր, սակայն չունեն իրավական խնդիրներ: Գնման այդ գործարքներում հաղթող է ճանաչվել «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն: Դրանք են՝ 2018 թ. ԱՀ-ԳՀԱՇՁԲ 18/01, 2019թ. ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/02, ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/10 և ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/12 ծածկագրերով գնումների գործարքները: Բոլոր 4 դեպքերում էլ համայնքի ղեկավարը ներգրավված չի եղել գնման ընթացակարգերը գնահատող հանձնաժողովների կազմում: Գնման գործընթացի վերաբերյալ բոլոր հայտարարությունները և հրավերները տեղադրված են համապատասխան տեղեկագրերում:

2018 թ. ԱՀ-ԳՀԱՇՁԲ 18/01 ծածկագրով գործարքում գնման առարկա է հանդիսացել Ամասիայի բրդի մշակման արտադրամասի վերանորոգման, վերակառուցման աշխատանքները:¹⁷ Մրցույթում «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն հաղթող է ճանաչվել որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող միակ մասնակից:¹⁸ Նշենք, որ ծրագիրն իրականացվել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության «ԵՄ-ն Շիրակի մարզին՝ նոր աշխատատեղերի շտրոհիվ բրդի արտադրություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում են «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն, «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հիմնադրամը, Շիրակի առևտրաարդյունաբերական պալատը և Ամասիայի համայնքապետարանը:

2019 թ. ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/02 ծածկագրով գործարքում գնման առարկա է հանդիսացել Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ջրածոր, Ողջի բնակավայրերի փողոցները ձյան շերտից մաքրման աշխատանքների ծառայությունը:¹⁹ Մրցույթում «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն հաղթող է ճանաչվել որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող, ինչպես նաև միակ մասնակից:

ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/10 ծածկագրով գործարքում գնման առարկա է հանդիսացել «Ամասիա համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջան ճանապարհի) կառուցապատման աշխատանքների» ձեռքբերումը:²⁰ Մրցույթում «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն հաղթող է ճանաչվել 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 չափաբաժիններով, որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող և որպես միակ մասնակից:²¹ Սակայն գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌՀԳ) ՀԿ-ի կողմից, քանի որ ՌՀԳ ՀԿ-ն ՀՀ միջազգային պայմանագիր իրականացնող կողմ է, և համաձայն կողմերի միջև կնքված N 8289-00/2017 դրամաշնորհային համաձայնագրի 1,4 կետի, սահմանված են մրցույթի չափորոշիչները, այն

¹⁷ ԱՀ-ԳՀԱՇՁԲ 18/01. ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր, http://gnumner.am/website/images/original/We184111607344117_Hraver.rar

¹⁸ ԱՀ-ԳՀԱՇՁԲ 18/01. ծածկագրով գնման հայտերի գնահատման նիստի արձանագրություն, <http://gnumner.am/website/images/original/34e95ec5.rar>

¹⁹ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/02. ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր, <http://gnumner.am/website/images/original/f29f2be3.doc>

²⁰ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10. ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր, <http://gnumner.am/website/images/original/Amasia%20hraver.rar>

²¹ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրություն, <http://gnumner.am/website/images/original/ArcanagrutyunN%202.rar>

Է՝ մրցույթը չի կարող համարվել կայացած, եթե առկա չէ առնվազն 3 գնային առաջարկ:²² Եթե, որ ծրագիրն իրականացվում է ՌԶԳ-ի և ֆինանսավորվում է Ավստրիայի զարգացման գործակալության Ավստրիական զարգացման և համագործակցության ծրագրային միավորի և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:

ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 19/12 ծածկագրով գործարքում գնման առարկա է հանդիսացել կրկին «Ամասիա համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջան ճանապարհի) կառուցապատման աշխատանքների» ձեռքբերումը:²³ Այս անգամ մրցույթին մասնակցել են «Մերձմոսկովյան» ՓԲԸ-ն, «Սիմա-Շին» ՍՊԸ-ն և «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն: «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն հաղթող է ճանաչվել 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 չափաբաժիններով, որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:²⁴

Փաստացի կայացած 3 պայմանագրերի մասով էլ համապատասխան աշխատանքները կատարվել են, սակայն դրանց որակական չափանիշների վերաբերյալ պնդումներ կատարել հնարավոր չէ: Առկա են աշխատանքների կատարման արդյունքների հանձնման-ընդունման ավարտական ակտերը՝ հաստատված մասնակից կառույցների կողմից, և ամեն ինչ, կարծես թե, օրենքի շրջանակներում է:

²² ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվություն, <http://gnumner.am/website/images/original/4eee9109.rar>

²³ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/12 ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր, <http://gnumner.am/website/images/original/b7a54247.rar>

²⁴ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրություն, <http://gnumner.am/website/images/original/4110f44a.rar>

Բյուջեի գնահատում և աուդիտ

Համայնքում 2018 և 2019 թթ. բյուջեի վերահսկողության նպատակով պլանավորվել և իրականացվել է ներքին աուդիտ, որը համայնքապետարանի աշխատակազմում համապատասխան բաժնի բացակայության պատճառով պատվիրվել է լիցենզավորում ունեցող ընկերությունների:

2018 թվականին իրականացված ներքին աուդիտից հետո, արդեն 2019 թ. իրականացվել է արտաքին աուդիտ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարման ուսումնասիրության համար, որի իրականացման ծախսերը վճարվել են 2019 թ. ներքին աուդիտի իրականացման համար նախատեսվող ֆինանսական միջոցներից, ինչի պատճառով արդեն 2019 թ. բյուջեի նկատմամբ ոչ մի տեսակի աուդիտ չի իրականացվել:

Համայնքի 2018 թ. բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտի եզրակացությունում նշվում է, որ հաշվետվությունները էական առումներով ճշմարիտ են ներկայացնում բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի իրական պատկերը և համապատասխան են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Համայնքի 2018 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու կողմից քննարկվել և հաստատվել է 22.01.2019թ. թիվ 1 նիստի ընթացքում, որին մասնակցել են համայնքի ավագանու անդամները, համայնքի ղեկավարը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու կողմից քննարկվել և հաստատվել է 23.01.2020 թ. թիվ 1 արտահերթ նիստի ընթացքում, որը դիտարկվել է մոնիտորների կողմից: Նիստին ներկա են եղել ավագանու անդամներ և համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ: Նիստի ընթացքում համայնքապետարանի ներկայացուցչի կողմից ներկայացվել են համայնքի 2019 թվականի բյուջեի հիմնական ցուցանիշները եկամտային և ծախսային հատվածներով, ընթացել է բավականին ակտիվ քննարկում համայնքի ավագանու անդամների և համայնքապետարանի աշխատակիցների միջև:

Մինչ ավագանու նիստերի անցկացումը, 2018թ. և 2019թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները տեղադրված են եղել համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում, ուստի այդ տարբերակով բնակիչները և ՔՀ կառույցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանոթանալու դրանց հետ: Մոնիտորների կողմից դիտարկված, համայնքի ավագանու 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվության քննարկման և հաստատման մասին նիստը եղել է արտահերթ, ինչի պատճառով համայնքի բնակիչները չեն կարողացել նախօրոք տեղեկանալ նիստի ժամկետների մասին, և միայն նիստից 1 օր առաջ համայնքապետարանի կայքէջում տեղադրվել է համապատասխան հայտարարություն, սակայն չի ներկայացվել նիստի օրակարգում ընդգրկված որոշման նախագծերի ցանկը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հետաքրքրված անձինք հնարավորություն չեն ունեցել տեղեկանալու համայնքի 2019թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման գործընթացի վերաբերյալ:

Չնայած ՀՀ բյուջետային օրենսդրության հստակ պահանջին, համայնքի 2018թ. և 2019թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ հանրային լուսմեր և քննարկումներ չեն կազմակերպվել, որի պատճառը, ըստ համայնքապետարանի



աշխատակցի դիտարկումների, բնակիչների հետաքրքրվածության պակասն է, ինչպես նաև հանրային բննարկումներին բնակիչների մասնակցության ցածր ցուցանիշները:

Ընդհանուր առմամբ, համայնքի 2018-2019թթ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ չեն եղել:

2018 թվականին, երբ համայնքապետարանի կողմից կազմվել է ծրագրային բյուջե, լրացվել են միայն բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման մոնիտորինգի և գնահատման կիսամյակային ձևանմուշները, որոնցում տեղ գտած արդյունքային ցուցանիշների կատարողականները միայն մասամբ են համընկնում ծրագրային բյուջեով սահմանված ցուցանիշների արժեքների հետ:

Բյուջետային ցուցանիշների վերլուծություն

Համայնքի 2018 և 2019թթ. բյուջեների հաստատված, ճշտված և փաստացի ցուցանիշները սահմանվել և իրականացվել են հետևյալ արդյունքներով՝



Կարելի է նկատել որոշակի անհամապատասխանություն 2 տարիների հաստատված և ճշտված հատվածների եկամտային և ծախսային մասերի միջև, ինչը պայմանավորված է ծախսային հատվածներում առկա դեֆիցիտով, որի ծածկման աղբյուր հանդիսանում է տարեսկզբյան ազատ մնացորդը: Չնայած վերջինս չի դիտարկվում որպես բյուջեի եկամուտ, սակայն համարվում է որպես բյուջեի մուտք և ուղղվում է բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ծածկմանը:

Համայնքի 2018 թվականի բյուջեով վարչական մասին բաժին է ընկել ընդհանուր եկամուտների 86.5 %-ը, իսկ ֆոնդային հատվածին՝ 13.5 %-ը: 2019 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները կազմել են 91.9 %, իսկ ֆոնդային մասի եկամուտները՝ 8.1 %:

2018 թվականի բյուջեով համայնքի հաստատված եկամուտները կատարվել են 113.3, իսկ ծախսերը 103.4 տոկոսով: ճշտված պլանը եկամտային մասով կատարվել է 97.9, իսկ ծախսայինով 90.4 տոկոսով: 2019 թվականի բյուջեով համայնքի հաստատված եկամուտները կատարվել են 107.8, իսկ ծախսերը՝ 99.6 տոկոսով: ճշտված պլանը եկամտային մասով կատարվել է 99.2, իսկ ծախսայինով՝ 92.2 տոկոսով:

Բնակչության մեկ շնչի հաշվարկով բյուջետային եկամուտները 2018 թվականին կազմել են 27789.00 դրամ, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ծախսերը՝ 27870.00 դրամ:

2019 թվականին մեկ շնչին բաժին ընկնող եկամուտները աճել են՝ կազմելով 28668.00 դրամ, ծախսերը՝ 28826.00 դրամ:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտները հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

2018 թվականին հաստատված պլանով սահմանվել է 54 692500.00 դրամ, ճշտված պլանով՝ 56.069500.00 դրամ, փաստացի կատարվել է 52 43 1888.00 դրամով, որը կազմում է հաստատված պլանի 95.9 և ճշտված պլանի 93.5 տոկոսը:

2019 թվականին հաստատված պլանով սահմանվել է 54 985700.00 դրամ, ճշտված պլանով՝ 56 125700.00 դրամ, փաստացի կատարվել է 54 676994.00 դրամով, որը կազմում է հաստատված պլանի 99.4 և ճշտված պլանի 97.4 տոկոսը:

Համայնքի 2018 թ. եկամուտները կազմել են 161 427274.30 ՀՀ դրամ,²⁵ որից՝

Եկամտատեսակ	Գումար (դրամ)	Մասնաբաժինը ընդհանուր կազմում (%)	համայնքի եկամուտների
Ընդհանուր եկամուտներ	161 427274.30	100	
Գույքահարկ շենք շինությունների համար	788384.00	0.49	
Հողի հարկ	20 442186.20	12.66	
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	10 914314.30	6.76	
Տեղական տուրքեր	1 078330.00	0.67	
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	298000.00	0.18	
Պետական բյուջեից ֆինանսավորվող դոտացիաներ	84 378900.00	52.27	
Պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	20 973000.00	13	

²⁵ Ամսափա համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտների կատարման տարեկան հաշվետվություն

Եկամուտներ գույքի վարձակալությունից	11 287965.60	7
Պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	3 415200.00	2.11
Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայություններից վճարներ	228285.00	0.14
Տեղական վճարներ	6 795882.20	4.2
Ոչ պաշտոնական դրամաշնորհներ	826827.00	0.52

2019 թ. բյուջեի եկամուտները կազմել են 166 537725.10 ՀՀ դրամ,²⁶ որից՝

Եկամտատեսակ	Գումարը (դրամ)	Բաժինը համայնքի ընդհանուր եկամուտների կազմում (%)
Ընդհանուր եկամուտներ	166 537725.10	100
Գույքահարկ շենք շինությունների համար	912585.00	0.54
Հողի հարկ	19 105650.20	11.47
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	12 488187.30	7.5
Տեղական տուրքեր	1 049050.00	0.63
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	273000.00	0.16
Պետական բյուջեից ֆինանսավորվող դոտացիաներ	96 088200.00	57.7
Պետական բյուջեից նպատակային հատկացումներ	10 685400.00	6.41
Եկամուտներ գույքի վարձակալությունից	11 341442.60	6.8
Պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	3 436500.00	2.06
Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայություններից վճարներ	1 635600.00	0.98
Տեղական վճարներ	6 772080.00	4.06
Ոչ պաշտոնական դրամաշնորհներ	2 735000.00	1.64

²⁶ Ամսախա համայնքի 2019 թվականի բյուջեի եկամուտների կատարման տարեկան հաշվետվություն:

Համայնքի 2018 թ. բյուջեի առանձին եկամտատեսակները հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

Եկամտատեսակ	Փաստացի կատարողական (դրամ)	Հաստատված պլան (դրամ)	Ճշտված պլան (դրամ)	Կատարողականը հաստատված պլանի նկատմամբ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ
Ընդհանուր եկամուտներ	161 427274.30	142 488100.00	164 838100.00	113	97.9
Գույքահարկ շենք շինությունների համար	788384.00	500400.00	500400.00	157.5	157.5
Հողի հարկ	20 442186.20	20 486000.00	22 626000.00	99.8	90.3
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	10 914314.00	11 777100.00	13 514100.00	92.7	80.8
Տեղական տուրքեր	1 078330.00	1 023000.00	1 023000.00	105.4	105.4
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	298000.00	220000.00	220000.00	106.4	106.4
Պետական բյուջեից ֆինանսավորվող դրոշմներ	84 378900.00	84 378900.00	84 378900.00	100	100
Պետական բյուջեից նպատակային հատկացումներ	20 973000.00	-	20 973000.00	100	100
Եկամուտներ գույքի վարձակալությունից	11 287965.60	14 697000.00	12 197000.00	76.8	92.5
Պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	3 415200.00	3 416700.00	3 416700.00	99.9	99.9
Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայություններից վճարներ	228285.00	-	-	-	-
Տեղական վճարներ	6 795882.20	5 929000.00	5 929000.00	114.6	114.6
Ոչ պաշտոնական դրամաշնորհներ	826827.00	-	-	-	-

Համայնքի 2018 թ. բյուջեի հաստատված և ճշտված պլաններով չեն պլանավորվել, սակայն փաստացի հավաքագրվել են եկամուտներ հետևյալ եկամտատեսակներից՝

- Համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայություններից վճարներ՝ 228285.00 դրամ:
- Ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ 826827.00 դրամ:

Համայնքի 2019 թ. բյուջեի առանձին եկամտատեսակները հաստատված և ճշգրտված պլանի նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

Եկամտատեսակ	Փաստացի կատարողականը (դրամ)	Հաստատված պլան (դրամ)	Ճշտված պլան (դրամ)	Կատարվածը հաստատված պլանի նկատմամբ	Կատարվածը մյուս ճշտված պլանի նկատմամբ
Ընդհանուր եկամուտներ	166 537725.10	154 490600.00	167 835773.00	107.7	99.2
Գույքահարկ շենք շինությունների համար	912585.00	745900.00	745900.00	122.4	122.4
Հողի հարկ	19 105650.20	20 049700.00	20 049700.00	95.3	95.3
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	12 488187.30	14 611600.00	14 611600.00	85.5	85.5
Տեղական տուրքեր	1 049050.00	1 077800.00	1 077800.00	97.3	97.3
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	273000.00	220000.00	220000.00	124.1	124.1
Պետական բյուջեից ֆինանսավորվող դոտացիաներ	96 088200.00	96 088200.00	96 088200.00	100	100
Պետական բյուջեից նպատակային հատկացումներ	10 685400.00	-	10 685400.00	100	100
Եկամուտներ գույքի վարձակալությունից	11 341442.60	11 964000.00	11 964000.00	94.8	94.8
Պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետ. բյուջեից ստացվող միջոցներ	3 436500.00	3 416700.00	3 436500.00	100.6	100
Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայություններից վճարներ	1 635630.00	-	1 499973.00	-	109
Տեղական վճարներ	6 772080.00	6 316800.00	6 316800.00	107.2	107.2
Ոչ պաշտոնական դրամաշնորհներ	2 735000.00	-	1 140000.00	-	239

Համայնքի 2018 թ. բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 161 901019.40 դրամ,²⁷ որից՝

Ծախսատեսակ	Գումար (դրամ)	Մասնաբաժինը համայնքի ընդհանուր ծախսերի կազմում (%)
Ընդհանուր ծախսեր	161 901019.40	100
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	49 780675.00	30.74
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30 221251.80	18.7
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2 355634.00	1.45
Գյուղատնտեսություն	27 475910.00	17
Ճանապարհային տրանսպորտ	6 236514.00	3.85
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)	- 250 423	-0.15
Աղբահանում	2 467200.30	1.5
Ջրամատակարարում	120000.00	0.07
Փողոցների լուսավորում	6 470280.00	4
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	2 011330.00	1.2
Հանգստի և սպորտի ծառայություններ	6 152100.00	3.7
Գրադարաններ	7 460000.00	4.6
Այլ մշակութային ծառայություններ	1 054200.00	0.65
Նախադպրոցական կրթություն	16 705900.00	10.3
Հիմնական ընդհանուր կրթություն	95 1000.00	0.6
Արտադպրոցական դաստիարակություն	966897.00	0.6
Ծերություն	87550.00	0.05
Սոցիալական հատուկ արտոնություններ	1 635000.00	1.1

²⁷ Ամասիա համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսերի կատարման տարեկան հաշվետվություն

Համայնքի 2019 թ. բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 167 453006.00 դրամ²⁸, որից՝

Ծախսատեսակ	Գումար (դրամ)	Մասնաբաժինը համայնքի ընդհանուր ծախսերի կազմում (%)
Ընդհանուր ծախսեր	167 453006.00	100
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	55 163259.00	32.9
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	26 766492.00	15.99
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2 923656.00	1.75
Գյուղատնտեսություն	16 375868.00	9.78
Էլեկտրաէներգիա	10 674458.00	6.37
Ոչ էլեկտրական էներգիա	9 747700.00	5.8
Ճանապարհային տրանսպորտ	3 311496.00	1.98
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)	-5 954170.00	-3.5
Աղբահանում	2 441800.00	1.45
Ջրամատակարարում	15000.00	0.008
Փողոցների լուսավորում	4 217855.00	2.5
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	366600.00	0.2
Հանգստի և սպորտի ծառայություններ	7 000000.00	4.18
Գրադարաններ	7 600000.00	4.53
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	120000.00	0.07
Այլ մշակութային կազմակերպություններ	1 463234.00	0.87
Հանգիստ, մշակույթ, կրոն (այլ դասերին չպատկանող)	312100.00	0.18
Նախադպրոցական կրթություն	21 319025.00	12.7
Հիմնական ընդհանուր կրթություն	801950.00	0.47

²⁸ Ամսախա համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերի կատարման տարեկան հաշվետվություն

Արտադարձցական դաստիարակություն	902016.00	0.53
Ծերություն	419675.00	0.25
Սոցիալական հատուկ արտոնություններ	1.465000.00	0.87

2018 թվականին համայնքի բյուջեի առանձին ծախսատեսակները հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

Ծախսատեսակ	Փաստացի կատարողական (դրամ)	Հաստատված պլան (դրամ)	Ճշտված պլան (դրամ)	Կատարվածը հաստատված ցուցանիշի նկատմամբ	Կատարվածը ճշտված պլանի նկատմամբ
Ընդհանուր Ծախսեր	161 901019.40	156 627700.00	178 977700.00	103.3	90.4
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	49 780675.00	46 911000.00	52 665130.00	106	94.5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30 221251.80	32 575700.00	30 309700.00	92.7	99.7
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2 355634.00	5 900000.00	4 545900.00	40	51.8
Գյուղատնտեսություն	27 475910.00	6 820000.00	29 692070.00	402	92.5
Ճանապարհային տրանսպորտ	6 236514.00	7 000000.00	8 750000.00	89	71
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)	-250423.60	-	-154200.00	-	162.0
Աղբահանում	2 467200.30	2 793000.00	2 793000.00	88.3	88.3
Զրամատակարարում	120000.00	120000.00	120000.00	100	100
Փողոցների լուսավորում	6 470280.00	4 400000.00	7 547500.00	147	85.8
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	2 011330.00	500000.00	2 356000.00	402.0	85.4
Հանգստի և սպորտի ծառայություններ	6 152100.00	6 319400.00	6 499400.00	97.4	94.7
Գրադարաններ	7 460000.00	7 460000.00	7 460000.00	100	100
Այլ մշակութային	1 054200.00	800000.00	1 600000.00	131.8	66

ծառայություններ					
Նախադպրոցական կրթություն	16 705900.00	17 830000.00	17 980000.00	93.6	93
Հիմնական ընդհանուր կրթություն	951000.00	300000.00	1 861000.00	317	51
Արտադպրոցական դաստիարակություն	1 635000.00	1 500000.00	1 700000.00	109	96.2
Ծերություն	87550	-	330000.00	-	27.0
Սոցիալական հատուկ արտոնություններ	966897.00	1 190000.00	1 190000.00	81.3	81.3

2019 թվականին համայնքի բյուջեի առանձին ծախսատեսակների հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

Ծախսատեսակ	Փաստացի կատարողական (դրամ)	Հաստատված պլան (դրամ)	Ճշտված պլան (դրամ)	Կատարվողը հաստատված պլանի նկատմամբ	Կատարողականը միջին օրվան ճշտված պլանի նկատմամբ
Ընդհանուր Ծախսեր	167 453006.00	168 156400.00	181 501573.00	99.5	92.2
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	55 163259.00	54 538200.00	58 999476.00	101.1	93.5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	26 766492.00	26 626700.00	26 778492.00	100.5	99.9
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2 923656.00	4 100000.00	3 710000.00	71	78.8
Գյուղատնտեսություն	16 375868.00	9 363300.00	18 781873.00	175	87.2
Էլեկտրաէներգիա	10 674458.00	-	10 685400.00	-	99.9
Ոչ էլեկտրական էներգիա	9 747700.00	-	10 029781.00	-	97.2
Ճանապարհային տրանսպորտ	3 311496.00	8 937200.00	3 421500.00	37	96.8
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)	-5 954170.00	-	-1 283700.00	-	464
Աղբահանում	2 441800.00	2 776800.00	2 776800.00	87.9	87.9
Զրամատակարարում	15000	1 000000.00	50000	1.5	30

Փողոցների լուսավորում	4 217855.00	4 715800.00	4 437100.00	89.5	95
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	366600.00	5 050200.00	483400.00	7.2	75.9
Հանգստի և սպորտի ծառայություններ	7 000000.00	6 560000.00	7 060000.00	106.7	99
Գրադարաններ	7 600000.00	7 600000.00	7 600000.00	100	100
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	120000.00	-	120000.00	-	100
Այլ մշակութային կազմակերպություններ	1 463234.00	1 600000.00	1 880600.00	91	78
Հանգիստ, մշակույթ, կրոն (այլ դասերին չպատկանող)	312100.00	1 400000.00	312143.00	22	99.9
Նախադպրոցական կրթություն	21 319025.00	18 440000.00	21 389000.00	115	99
Հիմնական ընդհանուր կրթություն	801950.00	300000.00	822000.00	267	97
Արտադպրոցական դաստիարակություն	902016.00	1 190000.00	1 190000.00	76	76
Ծերություն	419675.00	670000.00	670000.00	62.6	62.6
Սոցիալական հատուկ արտոնություններ	1 465000.00	1 500000.00	1 500000.00	97.6	97.6

ՇՄՊ ոլորտի ցուցանիշներ

2018 թ. ՇՄՊ ոլորտի շրջանակներում պլանավորված ծախսերը կազմել են 2 793000.00 դրամ, ինչը 4 068000.00 դրամով պակաս է 2017թ. նույն ցուցանիշի նկատմամբ, երբ այն կազմել էր 6 861000.00 դրամ: Համաձայն համայնքապետարանի ներկայացուցչի պարզաբանման՝ ցուցանիշների նման տարբերությունը կապված է բյուջեների կազմման հրահանգների և ցուցումների հետ, համաձայն որոնց համայնքապետարանները բյուջեի նախագծերը կազմելիս պետք է ծախսերը պլանավորեն՝ ոլորտի շրջանակներում հավաքագրվող սեփական եկամուտների հետ հավասարակշռված: Այս պատճառով 2017 թվականից հետո ՇՄՊ ոլորտի շրջանակներում իրականացվող աղբահանության ծրագրի համար անհրաժեշտ ծախսերի մի մասը հնարավորության սահմաններում տեղափոխվել են այլ ոլորտներ: 2019 թ. ոլորտի պլանավորած ծախսերը կազմել են 2 776800.00 դրամ, ինչը գրեթե նույնական է 2018 թվականին սահմանված ցուցանիշի հետ, երբ այն կազմել էր 2 793000.00 դրամ:

2018 և 2019 թթ. համայնքի բյուջեի ՇՄՊ ոլորտի շրջանակներում հավաքագրված եկամուտները, որոնք սահմանափակվում են համայնքի սեփական եկամուտներով,

հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

- 2018 թ. բյուջեի հաստատված պլանով սահմանվել է 2 789000.00 դրամ, ճշտված պլանով՝ 2 789000.00 դրամ, փաստացի կատարվել է 2 317900.00 դրամով, որը կազմում է հաստատված և ճշտված պլանների 83.1 տոկոսը:
- 2019 թ. բյուջեի հաստատված պլանով սահմանվել է 2 776800.00 դրամ, ճշտված պլանով՝ 2 776800.00 դրամ, փաստացի կատարվել է 2 755200.00 դրամով, որը կազմում է հաստատված և ճշտված պլանների 99.2 տոկոսը:

Նույն տարիներին ՇՄՊ ոլորտի շրջանակներում աշխատանքներ կատարվել են միայն աղբահանության ծրագրով, որում իրականացված ծախսերը ամբողջությամբ կատարվել են ոլորտի շրջանակներում հավաքագրված սեփական եկամուտների միջոցով: Իրականացված ծախսերը հաստատված և ճշտված պլանների նկատմամբ փաստացի կատարվել են հետևյալ ցուցանիշներով՝

- 2018 թ. բյուջեի հաստատված պլանով սահմանվել է 2 793000.00 դրամ, ճշտված պլանով՝ 2 793000.00 դրամ, փաստացի կատարվել է 2 467200.30 դրամով, որը կազմում է հաստատված և ճշգրտված պլանների 88.3 տոկոսը:
- 2019 թ. բյուջեի հաստատված պլանով սահմանվել է 2 776800.00 դրամ, ճշտված պլանով՝ 2 776800.00 դրամ, փաստացի կատարվել է 2 441800.00 դրամով, որը կազմում է հաստատված և ճշտված պլանների 87.9 տոկոսը:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ամասիա բազմաբնակավայր համայնքում ԾԲ-ի մոտեցումները ներդրվել են 2018 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, որի արդյունքում պատրաստվել է համայնքի 2018թ. ԾԲ-ի փաստաթուղթը: Սակայն, 2019 թվականին ԾԲ-ի փաստաթուղթը չի պատրաստվել, չնայած մշակվել և գործողության մեջ է դրվել համայնքի 2019թ. ՏԱՊ-ը:
- Դիտարկելով համայնքի ՏԱՊ-ում և ԾԲ-ում տեղ գտած արդյունքային ցուցանիշները և ուշադրություն դարձնելով դրանցում սահմանված արդյունքներին՝ նկատելի է, որ դրանց մի մասը սահմանված են բավականին հստակ, վերցված են ոչ շատ բարձր, իրականանալի ցուցանիշների արժեքներ: Այս խմբի մեջ կան և՛ քանակական, և՛ որակական ցուցանիշներ:
- 2018 և 2019 թթ. բյուջեների նախագծերը մինչև հանրային լուսմներն ու ավագանու կողմից նախագծերի հաստատումը չեն հրապարակվել: Բնակիչների համար բյուջեի նախագծի հետ ծանոթանալու հիմնական միջոց հանդիսացել են հանրային լուսմները:
- Բյուջեների նախագծերի լուսմներն ու քննարկումները եղել են պասիվ, բնակիչների մասնակցության ցուցանիշները՝ ցածր: Մինչև բյուջեի հաստատման գործընթացը համայնքապետարանի կողմից բնակիչներին չի տրամադրվել բավարար տեղեկատվություն ավագանու նիստի կայացման և դրա օրակարգում ընդգրկված նախագծերի վերաբերյալ:
- Համայնքապետարանի կողմից համայնքի պաշտոնական համացանցային կայքը դիտարկվում է որպես տեղեկատվության տարածման հիմնական միջոց, սակայն կայքում տեղ գտած տեղեկատվությունը միշտ չէ, որ նույնական է համայնքապետարանից ստացված փաստաթղթերի հետ, ինչը պայմանավորված է կայքում տեղ գտած տեղեկատվության թարմացման պարբերականությամբ:
- Տարվա ընթացքում համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները հիմնականում պայմանավորված են պետական սուբվենցիոն ծրագրերի և պետական, միջազգային և տեղական կազմակերպությունների այլ ծրագրերի ներգրավմամբ, բյուջեում չալանավորված մուտքերով կամ ալանավորված ծախսերի հետ կապված նոր հանգամանքների ի հայտ գալով:
- 2018թ. բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունում նշվում է, որ հաշվետվությունները եական առումներով ճշմարիտ են ներկայացնում բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին պատկերը և համապատասխանում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
- Համայնքի գնումների պլանները համապատասխանում են քննարկվող տարիների բյուջեներով նախատեսված ծախսերին: Համապատասխան էլեկտրոնային տեղեկագրերի միջոցով ներկայացվում են համայնքի տարեկան բյուջեով նախատեսված գնումների գործընթացի իրականացման վերաբերյալ հայտերի բացման և նիստերի գնահատման արձանագրությունները:
- Գնումների վերանայված պլանները սահմանված կարգին համապատասխան համայնքապետարանի կողմից տեղադրվում են ՀՀ ՖՆ գնումների համակարգի www.gnumner.am կայքի համապատասխան բաժնում:
- Համայնքի 2018 և 2019 թթ. գնումների գործընթացի մանրամասն հետազոտության արդյունքում փորձագետների կողմից առանձնացվել են գնման մի քանի գործարքներ, որոնք չունեն իրավական խնդիրներ, սակայն պարունակում են որոշակի ռիսկեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է՝

- ապահովել լրացուցիչ տեղեկատվական միջոցներ, ինչպես նաև մասնակցության այլ ձևեր համայնքային քննարկումներին և լսումներին բնակչության լայն շերտերի ներգրավվածության նպատակով,
- քննարկվող նախագծերը մինչև քննարկումը հասանելի դարձնել հանրությանը և հրապարակել՝ շահագրգիռ կողմերին դրա բովանդակությանը ծանոթացնելու և առավել արդյունավետ քննարկումներ ունենալու համար:

Համայնքապետարանի կողմից առաջարկվում է՝

Գնումների գործընթացի վերաբերյալ.

- համայնքապետարանին տալ հնարավորություն գնումների գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան տեղեկագրերում տեղադրել անմիջապես իր կողմից, ինչի շնորհիվ հնարավոր կլինի տեղավորվել օրենքով սահմանված երկօրյա ժամկետում, ինչպես նաև հնարավորինս նվազեցնել տեղեկագրերում հանդիպվող տեխնիկական վրիպակները:

ՇՄՊ ոլորտի ծախսերի վերաբերյալ.

- պատկան մարմինների առջև բարձրաձայնել բյուջեում տեղ գտած ծախսերը ՇՄՊ շրջանակներում հավաքագրվող սեփական եկամուտների հետ հավասարակշռելու հարցը, քանի որ այն հանդիսանում է խոչընդոտ ոլորտի շրջանակներում անհրաժեշտ աղբահանության ծրագրի ընդլայնման աշխատանքների համար: